


3205



1919

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒՅՑԻ ԿԵՆՏՐԱԼԻ ԲԻԲԼԻՈԹԵԿԱ

ԿՕՍՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՊԼԱՏՖՕՐՄԸ

3KV
4-78



1919

2010

В 2001.

10852 ա.հ.

Ընդունել է Երրորդ, Կոմունիստական Ինտերնացիոնալի
համագումարին Մոսկւայում 1919 թւի մարտին:

ԿՕՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՊԼԱՏՖՈՐՄԸ

Կադիտալիստական համաշխարհային սխառմի այն հակասութիւնները, որոնց թաքնւած էին նրա խորունկ ծաղրերում, անօրինակ ուժգնութեամբ արտայայտւեցին մի հոկայական պայթումի մէջ, որովհետեւ եղաւ իմպերիալիստական համաշխարհային մեծ պատերազմը:

Կադիտալիզմը փորձում էր յաղթահարել իր սեփական անիշխանութիւնը՝ արտադրութիւնը կազմակերպելով: Իբար հետ մրցող բազմաթիւ նախաձեռնողների տեղ հանդէս եկան կադիտալիստների հզօր միութիւններ՝ սինդիկատներ, կարաէլներ և արեստներ: Բանկային կադիտալը միացաւ արդիւնաբերական կապիտալին, ամբողջ տնտեսական կեանքը ընկաւ Ֆինանսական կադիտալիստական փոքրաթիւ տիրողների, օլիգարխիայի իշխանութեան տակ, որը այդ իշխանութեան շնորհիւ և իր կազմակերպութեան միջոցով հասաւ բացառիկ տիրապետութեան: Ազատ մրցակցութեան տեղը բռնեց մենաշնորհը, մոնոպօլիան: Առանձին կադիտալիստը զարձաւ կադիտալիստական միութիւնների անդամ: Խելագար անիշխանութիւնը փոխարինւեց կազմակերպութեամբ: Սակայն հէնց նոյն չափով, որ չափով կադիտալիստական արտադրութեան ձևից բխած անիշխանութիւնը փոխարինւում էր կադիտալիստական կազմակերպութեամբ առանձին երկրներում, աւելի և աւելի սրւում էին հակասութիւնները, մրցման պայքարը, համաշխարհային տնտեսութեան անիշխանութիւնը: Կազմակերպւած աւազակային մեծազոյն պետութիւնների փոխադարձ պայքարը երկաթէ անհրաժեշտութեամբ մղում էր նրանց դէպի հրէշաւոր իմպերիալիստական համաշխարհային պատերազմը: Շահեւոր տեսչը հրում էր համաշխարհային կադիտալին

1809
38966

4026

դեպի պայքար՝ վաճառքի նոր ընդհանուր դաժնելու, կապիտալի ցործակրութեան համար նոր շրջաններ, զազուկային (կոլոնիալ) տարուկներից բանւորական էժանագին ոյժ ձեռք բերելու համար: Իմպերիալիստական պետութիւնները, որոնք աշխարհը բաժանել են իրանց մէջ, իսկ ԽՖՍՀ-ի պետական, ամերիկական, ասիական, օւստրալիական բազմաժիյիս պրօլետարիներին ու գիւղացիներին դարձրել են աշխատող անասուններ, վաղ թէ ուշ պէտք է հանդիս բերէին մի հակայական ընդհարման մէջ կապիտալի անխելանութեան իսկական էութիւնը: Մյայէտ ծագեց կառաւարդ մեծագոյն ռճրագործութիւնը՝ համաշխարային աւաղակային պատերազմը:

Կապիտալիզմը փորձում էր յաղթահարել իր հակառակութիւններով իր սօցիալական կառուցւածքը: Բուրժուական հասարակութիւնը՝ դասակարգային հասարակութիւն է: Սակայն «քաղաքակրթւած» մեծ պետութիւններէ կապիտալը կամենում էր քողահակել հասարակական հակառակութիւնները: Գազութային կողմուրած ժողովուրդների հաշին կապիտալը կաշառում էր իր վարձու սարուկներին, ստեղծում էր շահերի ընդհանրութեան պատրանք շահագործողների և շահագործւողների միջև, — շահեր, որոնք ուղղւած էին ճնշւած գաղութների, գազութային ժողովուրդների դէմ — սեւամորթ, գեղնամորթ թէ կարմրամորթ. երազական և ամերիկական բանւոր դասակարգը նա մեխում էր իր իմպերիալիստական «հայրենիքին»:

Սակայն մշտապէս կաշառելու այդ ձեռք, որով ստեղծւում էր բանւոր դասակարգի հայրենասիրութիւնը և նրա հոգեկան սուղկացումը, պատերազմի շնորհիւ ստացաւ ճիշտ հակադիր կերպարանք: Գրօլետարիատի ֆիդելիտական ոչնչացումը, նրա կառաւարդ սարկացումը, կրէջատը ձնոււմը, ազատագրումը, այլասեռումը՝ անու որն, հղաւ քաղաքացիական խաղաղութեան վերջին տուրքը:

Վերջ է վերջայ պայթեց այն: Իմպերիալիստական պատերազմը փոխարկեց քաղաքացիական պատերազմի:

Բացւեց մի նոր դարաշրջան: Դա կապիտալիզմի կազմալուծման, նրա ներքին քայքայման դարաշրջանն է: Դա պրօլետարիատի կոմմունիստական յեղափոխութիւնն է:

Իմպերիալիստական սխտեմը կործանւում է: Խմորումն գաղութներում, կոմորումն մանր ազգութիւնների մէջ, որոնք

մինչ այժմ զուրկ էին անկախութիւնից, ապստամբութիւնը պրօլետարիատի, պրօլետարական յաղթական յեղափոխութիւնները մի քանի երկիրներում, իմպերիալիստական գործառնականների կազմալուծումը, միաժամանակ տիրող դասակարգերի կառաւարդ ապիկալութիւնը ժողովուրդների վիճակը անօրինելու մէջ անհա ժամանակակից գրութեան պատկերը բովանդակ աշխարհում:

Ըստ այսմ մարդկութեանը, որի կուլտուրան ենթարկւեց աւերածութեան, սպառնում է լիակատար ոչնչացման վտանգը: Կայ մի ոյժ միայն, որ ընդունակ է փրկել նրան. այդ ոյժը պրօլետարիատն է: Կապիտալիստական նախնական «կարգը» այլևս գոյութիւն չունի և ունենալ էլ չէ կարող: Կապիտալիստական արտադրութեան ձևի գոյութեան վերջին արդիւնքը քաօսն է. այդ քաօսը յաղթահարել կարող է միայն արտադրող դասակարգերից ամենամեծը՝ բանւոր դասակարգը: Նա պէտք է հաստատի մի իսկական կարգ, և դա կոմմունիստական կարգն է: Նա պէտք է կործանէ կապիտալի տիրապետութիւնը, պատերազմները դարձնէ անհնարին, ջնջէ պետութիւնների մէջ եղած սահմանները, ամբողջ աշխարհը դարձնէ ինքն իր համար աշխատող մի հասարակութիւն, իրականացնէ ազատութիւնն ու ժողովուրդների եղբայրութիւնը:

Մինչ այդ սակայն համաշխարային կապիտալը պատրաստութիւն է տեսնում տալու իր վերջին ճակատամարտը: «Ժողովուրդների գաշակեցութեան» և խաղաղասիրական դասարկաբանութեան քօղի տակ նա իր վերջին ճիգն է դնում վերստին կաշնելու կապիտալիստական սխտեմի տարերայնօրէն լուծւած մասնիկները և ուղղելու իր ոյժերը անդուստրիալ բոցավառուղ պրօլետարական յեղափոխութեան դէմ: Կապիտալիստական դասակարգերի այդ նոր խոշոր դաւադրութեանը պրօլետարիատը պէտք է պատասխանէ տիրելով քաղաքական իշխանութեանը, ուղղէ այդ իշխանութիւնը իր թշնամիների դէմ և օգտագործէ այն որպէս լծակ հասարակութեան անտեսութիւնը վերակազմելու համար: Համաշխարային պրօլետարիատի վերջնական յաղթանակը պիտի սկիզբը լինի ազատագրւած մարդկութեան իսկական պատմութեան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԻԱՃՈՒՄԸ

Քաղաքական իշխանութեան նւաճումը պրօլետարիատի կողմից նշանակում է բուրժուազիայի քաղաքական իշխանութեան ոչնչացումը: Բուրժուազիայի ձեռքին եղած զօրեղագոյն քաղաքական գործիքը բուրժուական պետական ապարատն է, իր կապիտալիստական զօրաբանակով, որ դառնում է բուրժուական իւնկերական սպայակոյտի հրամանատարութեան տակ, նրա ստիկանութիւնն է ու ժանդարմերիւն, նրա բանտապահներն ու դատաւորները, նրա հոգեւոր հայրերը, չինովնիկները և այլն: Պետական իշխանութեան նւաճումը չէ կարող սահմանափակել լոկ միւնիստրական կազմի անհատների փոփոխութեամբ. դա պիտի նշանակէ՝ պետական խորթ ապարատի ոչնչացումը, նրա կենդրոնացումը իրական ոյժի ձեռքին, բուրժուազիայի, հակայեղափոխական սպայակոյտի և սպիտակ գլարդիայի զինաթափումը և պրօլետարիատի, յեղափոխական զինւորների ու բանւորական կարմիր գլարդիայի սպառազինումը: Այլև պիտի նշանակէ՝ հեռացումը բոլոր բուրժուական դատաւորների և կազմակերպումը պրօլետարական դատարանի, ոչնչացումը բէալցիօն չինովնիկութեան տիրապետութեան և ստեղծումը պրօլետարական կառավարութեան նոր օրգանների: Պրօլետարիատի յաղթանակը ապահովում է հակառակորդի իշխանութեան քայքայումով և պրօլետարական իշխանութեան կազմակերպումով. դա նշանակում է բուրժուական պետական ապարատի կործանումը և պրօլետարականի կառուցումը: Երբ պրօլետարիատը յաղթանակէ վերջնականապէս կոտորելով բուրժուազիայի դիմադրութիւնը, միայն այն ժամանակ նա կարող կըլինի ստիպել իր նախկին հակառակորդներին իր հսկողութեամբ՝ սպասաւորել իրան, հետզհետէ լծելով նրանց կոմմունիստական շինարարութեան աշխատանքին:

ԴԵՄՕԿՐԱՏԻԱ ԵՒ ԴԵԿՏԱՏՈՒՐԱ

Նման ամեն մի պետութեան, պրօլետարական պետութիւնն ևս իրանից ներկայացնում է մի հարկադրական ապարատ, սակայն նա ուղղում է սոսկ բանւոր դասակարգի թշնամիներին դէմ: Նրա կոչումն է՝ ընկճել և անհնարին դարձել շահագործողների դիմադրութիւնը, որոնք յուսահատ պայքարի մէջ գործ են դնում ամեն միջոց արեան հեղեղներում խեղդելու յեղափոխութիւնը: Միւս կողմից՝ պրօլետարիատի գեկտատուրան, որ պաշտօնապէս այդ դասակարգը դնում է տիրապետողի դրութեան մէջ, հանդիսանում է. իրապէս փոխանցման շրջան:

Բուրժուազիայի դիմադրութեան աստիճանական ընկճումով նա պիտի ենթարկւի էքսպրօպրիացիայի և հետզհետէ պիտի դառնայ հասարակութեան աշխատող շերտերից մէկը, որից յետոյ աստիճանաբար անյետանալու է դիկտատուրան, մեռնելու է պետութիւնը, վերանալու է նաև հասարակութեան դասակարգային բաժանումը:

Այսպէս կոչւած դէմօկրատիան, այսինքը բուրժուական դէմօկրատիան, ոչ այլ ինչ է, եթէ ոչ բուրժուական քղաքական դիկտատուրա: Հռչակաւոր դարձած «Ժողովրդի կամքը» ընդհանուր հասկացողութիւնը նոյնպիսի կեղծիք է, ինչպէս միատարր ժողովուրդը: Իրապէս գոյութիւն ունին դասակարգեր իրար ոչնչացնող հակադիր ձգտումներով: Եւ որովհետև բուրժուազիան կազմում է աննշան փոքրամասնութիւն, ապայ նա օգտագործում է այդ կեղծիքը, այդ իրեակայեալ «Ժողովրդի կամքը», որպէսզի այդ գեղեցիկ բառի շնորհիւ կարողանայ հաստատել իր գերիշխանութիւնը բանւոր դասակարգի վրայ և հարկադրել նրան ճանաչելու իր դասակարգի կամքը: Պրօլետարիատը, ընդհակառակը, որ կադ-մում է բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը, միանգամայն ամաշկարայ կօզտագործի իր մասսայական կազմակերպութիւնների, իր խորհուրդների դասակարգային հզօրութիւնը, որպէսզի

վերջ տայ բուրժուազիայի արտօնութիւններին և ապահովի փոխանցումը գէպի ապագասակարգային կօմմունիստական հասարակութիւն:

Բուրժուական գէմօկրատիայի էութիւնը կայանում է նրանում, որ նրա ճանաչած իրաւունքներն ու ազատութիւնները գուտ ձեւական են ու գէկլարատիւ, որոնք անմատչելի են հէնց պրօլետարիատին և կիսա-պրօլետարական տարրերին նիւթական միջոցների բացակայութեան պատճառով. մինչ բուրժուազիան ունեցել է կառարեալ հնարաւորութիւն օգտագործելու իր նիւթական միջոցները, իր մամուլը և կազմակերպութիւնները՝ ստեղծ և ժողովրդին խաբելու համար: Ընդհակառակը, խորհրդային սիստեմի, պետական իշխանութեան այդ նորագոյն տիպի էութիւնը կայանում է նրանում, որ նրա օրով պրօլետարիատը ստանում է հնարաւորութիւն ապահովելու իր իրաւունքներն ու ազատութիւնը: Խորհրդային իշխանութիւնը ժողովրդին է յատկացնում լաւագոյն պայտաններն ու տները, ապարաններն ու թղթի պահեստները նրա մամուլի համար, նրա ժողովների և ակումբների համար: Միայն այդ պարագաներում հնարաւոր է գտնում պրօլետարական գէմօկրատիայի գոյութիւնը:

Բուրժուական գէմօկրատիան՝ իր պարլամենտական սիստեմով՝ լոկ խօսքերով է հնար տալիս մասսաներին մասնակցելու պետական կառավարութեան մէջ: Իրապէս մասսաներն ու նրա կազմակերպութիւնները միանգամայն չեզոքացւում են թէ իշխանութիւնից և երկիրը կառավարելու գործից: Մինչ խորհրդային սիստեմի գոյութեան օրով երկիրը կառավարում են մասսայական կազմակերպութիւնները, նրանց միջոցով՝ իրանք մասսաները գրաւում են պետութիւնը կառավարելու գործի համար բանւորների շարունակ մեծացող շարքեր, և այդ ճանապարհով միայն ամբողջ բանւոր ժողովուրդը հետգնեռէ լծում է պետութիւնը կառավարելու իրական աշխատանքին: Ըստ այժմ խորհրդային սիստեմը յինւում է պրօլետարիատի մասսայական կազմակերպութեան վրայ յանձին խորհուրդների, արհեստակցական յեղափոխական միութիւնների, կօօպերատիւների, և այն:

Բուրժուական գէմօկրատիան և պարլամենտարիզմը, շնոր-

հիւ օրէնսդրական և գործադիր իշխանութիւնների բաժանման և ժողովրդական ներկայացուցիչների յեռ կանչելու օրէնքի բացակայութեան, աւելի սրում են մասսայի օտարացումը պետութիւնից: Ընդհակառակը, խորհրդային սիստեմը իր յետկանչելու օրէնքով, օրէնսդրական և գործադիր իշխանութիւնների միացումով, խորհուրդների հաւաքական այժերով աշխատելու ընդունակութեամբ, մասսաներին կապում է կառավարական մարմինների հետ: Այդ կապը հեշտանում է նաև նրանով, որ խորհուրդների սիստեմի օրով ընարութիւնները տեղի են ունենում արհեստականօրէն ստեղծւած ընարական տերիտորիալ շրջաններում, որոնք համապատասխան են դարձւում արտագրական միութիւններին:

Այդ ճանապարհով խորհուրդների սիստեմը ապահովում է պրօլետարական ճշմարիտ գէմօկրատիայի գոյութիւնը, գէմօկրատիայի—պրօլետարիատի համար և ուղղւած բուրժուազիայի գէմ: Այդ սիստեմի օրով ապահովւում է արդիւնաբերական պրօլետարիատի գերադաս վիճակը իբրև գեկավարող, կազմակերպւած և ըստ տմենային հասուն գաղափարի, որի գերիշխանութեան տակ պիտի հնարաւորութիւն ստանան բարձրանալու հեղհեռէ կիսա-պրօլետար տարրերն ու աղքատ գիւղացիութիւնը: Արդիւնաբերական պրօլետարիատի այդ ժամանակաւոր գերադասութիւնը պիտի օգտագործւի շուրս կորգելու համար գիւղական մանր բուրժուական մասսաներին բուրժուազիայի և կուլակների ազգեցութեան շրջանից, կազմակերպելով նրանց ու լծելով կօմմունիստական շինարարութեան աշխատանքին որպէս գործակիցներ:

ՔՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԷՔՍՊՐՕՊՐԻԱՅԻԱՆ ԵՒ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՍՕՑԻԱԼԻՉԱՅԻԱՆ

Կապիտալիստական սիստեմի և կապիտալիստական աշխատանքի կարգապահութեան կազմալուծումը ներկայ միջնասակարգային յարաբերութիւնների շրջանում անհնարին է դարձնում

արտադրութեան վերականգնումը նախկին հիմունքների վրայ: Բանւորների պայքարը աշխատավարձի բարձրացման համար, նոյն իսկ, աշոգութեան դէպքում, չէ տալիս նրանց կեանքի մակերևոյթը բարձրացնելու զբաղման հետևանքներ. անհրաժեշտ միջոցների դնելի ածումը ամեն մի աշոգութիւն անխուսափելիօրէն հաւասարեցնում է զերօյի: Բանւորների եռանդուն պայքարը աշխատավարձի բարձրացման համար—մանաւանդ այն երկիրներում, որոնց վիճակը բացարձակապէս անյուսալի է շնորհիւ իր տարերային դաժանութեան և համատարած դառնալու հակումով—կապիտալիստական արտադրութեան յետագայ զարգացումը զարձնում է անհնարին: Բանւորների զրութեան բարւոքումը հնարաւոր կլլինի այն դէպքում, երբ պրօլետարիատը արտադրութեան տէր կը դառնայ:

Տնտեսութեան արտադրող ոյժերի բարձրացման համար և ըստ հնարաւորութեան շուտով ընդձելու համար բուրժուազիայի դիմադրութեան ոյժը—որը երկարացնում է հին հասարակութեան մահաւան տապնապը և զբանով ստեղծում տնտեսական կեանքի կատարեալ կործանման վտանգ—պրօլետարական գեկտատուրան պէտք է իրականացնէ խոշոր բուրժուազիայի և ազնւականութեան էքսպրօպրիացիան, արտադրութեան ու փոխադրութեան միջոցները զարձնելով պրօլետարական պետութեան հասարակական սեփականութիւնը:

Կոմունիզմը ծնւում է այժմ կապիտալիստական կարգերի աւերակներէ միջից. պատմութիւնը այլ ելք չէ տալիս մարդկութեանը: Օպօրտունիստները, որոնք անիրազործելի պահանջ են դնում՝ վերականգնելու կապիտալիստական տնտեսութեան սիստեմը, նպատակ ունեն ուշացնելու սօցիալիզացիան, ըստ որում և տեական են դարձնում ճգնաժամի լուծումը և ստեղծում կատարեալ կործանման սպառնալիք. մինչ կօմունիստական յեղափոխութիւնը հանդիսանում է լուսադոյն միջոց, որի շնորհիւ պրօլետարիատը, հասարակութեան այդ ճշմարիտ արտադրող ոյժը և նրա հետ ինքը հասարակութիւնը կարող կլինին փրկւելու կորստից:

Պրօլետարական գեկտատուրան երբէք էլ նպատակ չունի արտադրութեան և փոխադրութեան միջոցների իւրացման և բա-

ժանման որեւէ քայլ անելու: Ընդհակառակը, նրա նպատակն է աւելի ևս մեծ կենդրօնացում մտցնելու արտադրող ոյժերի մէջ և ամբողջ արտադրութիւնը ենթարկելու մի ընդհանուր ծրագրի:

Ամբողջ տնտեսութեան սօցիալիզացիայի իբր առաջին քայլ անհրաժեշտ է՝ խոշոր բանկերի սօցիալիզացիան, որոնք այժմ զեկավարում են արդիւնաբերութիւնը. անհրաժեշտ է տիրել պետական-կապիտալիստական տնտեսական օրգաններին՝ յանձնելով այն բոլորը պրօլետարական պետական իշխանութեան. տիրել բոլոր կօմունալ ձեռնարկութիւններին, համայնացնել սինդիկատների և տրեստների մէջ ամփոփւած արտադրութեան ճիւղերը, նոյննապէս և արտադրութեան այն ճիւղերը որոնց հաւաքման և կենդրոնացման աստիճանը հնարաւոր է դարձնում նրանց սօցիալիզացիան. այլև անհրաժեշտ է համայնացնել զիւղատնտեսական կալւածները, զարձնելով նրանց հասարակութեան ձեռքով կառավարող երկրագործական տնտեսութիւններ:

Ինչ վերաբերում է համեմատաբար աւելի մանր ձեռնարկութիւններին, պրօլետարիատը պէտք է աստիճանաբար համայնացնի նրանց նայելով մեծութեանը:

Ըստ որում պէտք է առանձնապէս ընդգծել, որ մանր սեփականութիւնը ոչ մի դէպքում չըպիտի ենթարկւի բռնագրաւման, և մանր սեփականատէրերը, որոնք ուրիշի աշխատանքը չեն շահագործում, չըպիտի ենթարկւին ոչ մի բռնութեան: Հասարակութեան այդ շերտը պիտի զբաւի սօցիալիստական կազմակերպութեամբ ակնյայտի օրինակով և գործնական փորձով, որոնք բացայայտ կերպով կը ցուցադրեն նոր կարգերի գերազաս լինելը, և այն, թէ ինչպէս այդ կարգերը ազատագրեցին մանր գիւղացիութիւնն ու քաղաքների մանր բուրժուազիան՝ կուլակների ու ազնւականների տնտեսական լուծից, հարկերի ծանրութիւնից (մանաւանդ պետական պարտքերի հատուցումը չճանաչելուց յետոյ):

Պրօլետարական գեկտատուրայի նպատակը՝ տնտեսական կեանքում կիրականանայ այն չափով, որ չափով պրօլետարիատը հնարաւորութիւն կըստանայ ստեղծելու կենդրոնացրած օրգաններ արտադրութիւնը կառավարելու համար և կիրադործի առհասարակ բանւորական կառավարութեան սկզբունքը: Ընդ նմին նա

ստիպւած է լինելու օգտագործել իր այն մասսայական կազմակերպութիւնները, որոնք ոչ ոք կապ ունեն արտադրութեան պրօցէսի հետ: Բաժանման գործում պրօլետարական գիկտատուրան պիտի առևարի փոխարէն իրականացնի մթերքների կանոնաւոր բաժանումը. այդ նպատակին հասնելու համար կարելի միջոցները հետեւեալներն են, առևարական խոշոր ձեռնարկութիւնների համայնացումը, սօցիալիզացիան՝ մթերք բաժանող բուրժուական-պետական, նաև մոնօքրիպալ օրգանների յանձնումը պրօլետարիատին: Վերահսկումն կօօպերատիւ խոշոր միութիւնների վրայ, որոնց կազմակերպչական ապարատը պիտի ունենայ անտեսական մեծ նշանակութիւն մանաւանդ փոխանցման շրջանում. աստիճանական կենդրոնացումն այդ բոլոր օրգանների և միացումը նրանց մի ամբողջութեան մէջ՝ մթերքների խելացի բաժանման համար: Ինչպէս արտադրութեան, համար, այնպէս և բաժանման, պէտք է օգտագործեն բոլոր պատրաստուած արհեստագէտներն ու մասնագէտները, սակայն նրանց գիմադրութիւնը քաղաքական կեանքի սահմաններում ընդհելուց յետոյ, երբ նրանք ընդունակ կը դառնան կապիտալին ծառայելու. փոխարէն՝ ծառայել արտադրութեան նորագոյն սխեմային:

Պրօլետարիատը նպատակ չունի ճնշելու նրանց, ընդհակառակը, միմիայն նա է առաջին անգամ հնար առնու նրանց զարգացնելու համար ստեղծագործական ամենաանգոյշ աշխատանք: Պրօլետարական դիկտատուրան, կը փոխարինէ ֆիզիկական և մտաւոր աշխատանքի բաժանումը, — որ յատուկ է եղել կապիտալիզմին, — այդ երկուսի միացումով, որով միացած կըլինի աշխատանքն ու գիտութիւնը: Գործարանների, հանքերի և կալածների բնագործման հետ միաժամանակ պրօլետարիատը պիտի վերջ տայ կապիտալիստական տնտեսքների շահագործմանը, յանձնելով մեծ աները տեղական բանւորական խորհուրդներին, տեղաւորելով բանւոր ընակչութիւնը բուրժուական բնակարաններում եայլն: Այդ հսկայական յեղաշրջան ընթացքում խորհրդային իշխանութիւնը պէտք է անխախտ կերպով ստեղծէ իր կառավարական հսկայ ապարատը, հարկաւ կենդրոնացման հիմունքներով, միւս կողմից կարավարելու անմիջական աշխատանքի պիտի հրաւիրէ բանւորական աւելի և աւելի լայն մասսաներին:

ՅԱԳՐԱՆԱԿԻ ՈՒՂԻՆ

Յեղափոխական շրջանը պրօլետարիատից պահանջում է գործ ղեկ պայքարի այնպիսի միջոցներ, որոնք կենդրոնացնելու են նրա բովանդակ եռանդը, և ամենից առաջ պահանջում է մասսայական պայքարի ձեւեր իր արամաբանական վախճանով. այն է՝ հանդէս գալ բացարձակ ընդհարումով, բաց ճակատամարտում ընդդէմ բուրժուական պետական մեքենայի: Այդ պայքարի մէջ պիտի մերժեն կուր բոլոր միւս ձեւերը, ինչպէս օրինակ, բուրժուական պարլամենտարիզմի յեղափոխական օգտագործումը: Յաղթական պայքարի անխուսափելի նախապայմանը պէտք է լինի յարաբերութիւնների խզումը՝ միայն կապիտալի տնտեսական ստրկամիտ սպառաւորների և կոմմունիստական յեղափոխութեան զանիճների հետ, որոնց թւում են աջ սօցիալ-դեմօկրատները, այլ նաև «կենդրոնի» (Կաուցկու կողմակիցները), որոնք տադնալի օրերին լքում են պրօլետարիատին և համայնաբանութիւններ անում վերջինիս բացարձակ թշնամիների հետ:

Միւս կողմից անհրաժեշտ է զանազակ բանւորական յեղափոխական շարժման մասնակից այնպիսի աարքերի հետ, որոնք թէև մինչ այդ չեն եղել սօցիալիստական կռուակցութեան մէջ: սակայն այժմ ընդունում են տրոյսկիստ պրօլետարական գիկտատուրայի առաւելածը՝ խորհուրդների ձեռով, ինչպէս օրինակ՝ օթնդիկալիզմի կոմադատտիտի տարրերը: Յեղափոխական շարժման առումը բոլոր երկրներում, այդ յեղափոխութիւնը խեղահոյս վտանգը կապիտալիստական պետութիւնների զանազնութեան ձեռքով սօցիալ — դատաւանների կուռակցութիւնների միաժամանակ փորձերը (Բերնի գեղին շինտերնացիօնալի) առաջացումը, որ ստրկամարտէն ծառային Վիլսոնի լեզային, վերջապէս բացարձակ անհրաժեշտութիւնը համաձայնեցնելու պրօլետարական յարաձեպկումները — այս ամենը անխուսափելի կերպով տանում է դէ-

պի ճշմարիտ յեղափոխական և ճշմարիտ պրօլետարական կօմունիստական ինտերնացիօնալի հիմնադրութիւնը:

Մի ինտերնացիօնալ, որը ընդունակ կըլինի ենթարկելու այսպէս կոչւած ազգային շահերը համաշխարհային յեղափոխութեան շահերին, որով հնարաւոր կը դարձնէ փոխադարձ օգնութիւնը զանազան պետութիւնների պրօլետարիատի կողմից, մասնաւորապէս որ առանց տնտեսական և այլ ձեռքի փոխադարձ օգնութեան պրօլետարիատը անկարող կըլինի կառուցել հասարակական իր նոր շէնքը: Միւս կողմից, հակառակ զեղին սօցիալիստական ինտերնացիօնալի, կոմունիստական պրօլետարիատի ինտերնացիօնալը պիտի օգնութեան հասնի գաղութային շահագործող ժողովուրդների մղած պայքարին ընդդէմ իմպէրիալիզմի, որով նպաստած կը լինի համաշխարհային իմպէրիալիզմի սխառմի վերջնական ասպարէսն: Կապիտալիստական ոճրագործները համաշխարհային պատերազմի սկզբում պնդում էին, թէ նրանք բոլորն էլ գուրս են եկել պաշտպանելու միմիայն իրանց հայրենիքը: Սակայն շատ շուտով գերմանական իմպէրիալիզմը ցուցադրեց իր գաղանային բնոյթը մի շարք արիւնային գործուժութիւններով Ռուսաստանում, Ուկրաինայում, Ֆինլանդիայում: Այժմ էլ իրանց հերթին մերկացնում են՝ նոյն իսկ ամենայնուամայ ազգաբնակչութեան առաջ՝ Համաձայնութեան պետութիւնները, որոնք հանդէս եկան որպէս համաշխարհային կողոպտիչներ և պրօլետարիատի դաժիճներ: Գերմանական բուրժուազիայի և սօցիալ-պատրիոտների համաձայնութեամբ, խաղաղասիրական կեղծ դարձուածքներով նրանք ճգնում են ճնշել ևրոպական պրօլետարիատի յեղափոխութիւնը տանկերի ու գաղութային բուլթ բարձրորոս զօրքերի օգնութեամբ:

Աննկարագրելիօրէն դաժան է բուրժուական մարդակերների սպիտակ տերրորը: Անթիւ են բանւոր դապակարգի զոհերը. նա կորցրեց նաև իր լաւագոյն մարտիկներին՝ Լիբկնեխտին և Լիւքսիմբուրգին:

Պրօլետարիատը պէտք է պաշտպանւի, պաշտպանւի ինչ գնով էլ որ լինի:

Կոմունիստական ինտերնացիօնալը կոչ է անում համաշ-

խարհային պրօլետարիատին միանալ այս վերջին պայքարին.

Ձէնք՝ զէնքի դէմ.

Ոյժ՝ ոյժի դէմ.

Կորչի կապիտալի իմպէրիալիստական գաղաղութիւնը.

Կեցցէ պրօլետարական խորհուրդների միջազգային հասարակապետութիւնը:



ԳԻՆՆ Է ՄԷԿ ՐՈՒՔԼԻ

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0036741

